# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"14" 10 2014թ. № 149 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի նիստի N13 արձանագրային որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի, **որոշում եմ**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2015 թվականին իրականացվելիք միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովին՝ ապահովել նախատեսված միջոցառումների իրականացումը և համապատասխան տեղեկատվության տրամադրումը:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել այդ որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2014թ. հոկտեմբերի 14
ք. Կապան

**Հավելված**

**ՀՀ Սյունիքի մարզպետի**

**2014թ.հոկտեմբերի 14-ի N149-Ա որոշման**

# ԾՐԱԳԻՐ

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2015 թվականի միջոցառումների

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Համակատարողը | Ժամկետը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Կրթության և գիտության պետական քաղաքականության մեջ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ բաղադրիչի ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացում | Սյունիքի մարզի 10 համայնքներում ավագանու անդամների համար կկազմակերպվեն դասընթացներ՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության հիմնախնդիրների վերաբերյալ: | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ համակարգման վարչություն | Համայնքներ | 1-ին եռամսյակ |
| 2. | Մարզային և համայնքային մակարդակներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետությ ան բարձրացմանը,այդ | 2.1 Սյունիքի մարզպետարանում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերով զբաղվող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման նպատակով կիրավիրվեն նիստեր,կամփոփվեն կատարված աշխատանքները,կկազմվեն հաշվետվություններ և արձանագրություններ | ՀՀմարզպետարա նի մարզային գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով | | Տարվա ընթացքում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | աշխատանքների համակարգմանն ու մշտադիտարկմանն ուղղված միջոցառումների իրականացում | | | | |
| | | 2.2 Սյունիքի մարզում կիրականացվեն կանանց և տղամարդկանց իրավահավասարության առկա վիճակի գնահատման և մշտադիտարկման ապահովմանն ուղղված լուսաբանման աշխատանքներ | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ համակարգման վարչություն | | Տարվա ընթացքում |
| | | 2.3 Սյունիքի մարզում կիրականացվեն նախապատրաստական աշխատանքներ «Լավագույն համայնք՝Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հարցերի ուղղությամբ»ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության համար հայտարարված մրցույթի անցկացմանը աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏԾ համակարգման վարչություն, ԸԿԵԻՊ բաժին | Համայնքներ | 2-րդ եռամսյակ |
| | | 2.4 Սյունիքի մարզում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման մեթոդական ուղեցույցի իրավական ամրագրումից հետո համայնքներում կիրականացվեն միջոցառումներ համայնքների աշխատանքների | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի<br><br>ԸԿԵԻՊ բաժին<br><br>Իրավաբանական | Համայնքներ | Տարվա ընթացքում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | իրականացման համար աջակցության տրամադրման ուղղությամբ | բաժին | | |
| 3 | Հասարակությունում կանանց և տղամարդկանց իրավահավասարության հիմնահարցերի լուսաբանմանը,սեռի հատկանիշով խտրական գործելակերպի հաղթահարմանը և զանգվածային լրատվամիջոցներով դրանց տարածմանն ուղղված միջոցառումների իրականացում | Սյունիքի մարզային լրատվամիջոցներով կցուցադրվեն տեսահոլովակներ կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ: | Մարզպետարանի աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին | Տեղական լրատվամիջոցներ | Տարվա ընթացքում |

Սյունիքի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան